# ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ

# ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

*ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ*

*/ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ/*

***2016Թ.***

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Ք. ԱՇՏԱՐԱԿ

*ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝*

*ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ*

*Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն*

*< 20 > ՀՈՒՆՎԱՐԻ 2016թ.*

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2016Թ.

# Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն  Ծ Ր Ա Գ Ի Ր

| *N* | *ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ* | *ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ* | *ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԲԱԺԻՆ* | *ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ* | *ՆՇՈՒՄՆԵՐ* |
|---|---|---|---|---|---|
| *1.* | *2.* | *3.* | *4.* | *5.* | *6.* |
| 1 | Ավագանու նիստերի նախապատրաստում և անցկացում | 2 ամիսը մեկ անգամ | Աշխատակազմի քարտուղար, տեղակալներ | Գ. Դատումյան | |
| 2 | Նյութերի նախապատրաստում և առաքում ավագանու անդամներին: Ավագանու անդամների մասնակցության ապահովում: Արձանագրության կազմում և որոշումների առաքումը մարզպետարան, արդարադատության նախարարություն /ըստ անհրաժեշտության/: Ընդունված որոշումների մասսայականացում | 7-օրյա ժամկետում | քարտուղար | Գ. Դատումյան Մ. Սարդարյան | Մամուլ Տարատեսակ միջոցներով, թերթիկների միջոցով, համացանցով |
| 3 | Քաղաքապետի որոշումների և կարգադրությունների նախապատրաստում /տպագրում/: Աշխատակազմի քարտուղարի հրամանների նախապատրաստում, տպագրում | ըստ անհրաժեշտության ընթացքում | քարտուղար, տեղակալներ, բաժինների պետեր | Գ. Եղիազարյան Հ. Բաղդասարյան Գ. Դատումյան | |
| 4 | Թռուցքաժողովներ քաղաքապետի մոտ | յուրաքանչյուր երկուշաբթի ժամը $10^{00}$ | քարտուղար բաժինների պետեր գլխավոր մասնագետներ | Գ. Դատումյան | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5 | Խորհրդակցություններ քաղաքապետի տեղակալների և քարտուղարի մոտ | ըստ անհրաժեշտության | բաժինների պետեր | Հ. Բաղդասարյան<br>Գ. Եղիազարյան<br>Գ. Դատումյան | |
| 6 | Քաղաքապետի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպում և անցկացում | ըստ սահմանված գրաֆիկի և անհրաժեշտության | ավագանու անդամներ բոլոր բաժինները | Գ. Դատումյան<br>Ա. Աղաբաբյան | |
| 7 | Լսել քաղաքապետարանին ենթակա հիմնարկ-ձեռնարկությունների և կազմակերպությունների ղեկավարների ինֆորմացիաներն ընթացքում կատարած աշխատանքների և առաջիկա ծրագրերի մասին | 3 ամիսը մեկ անգամ կամ ըստ անհրաժեշտության | աշխատակազմի բաժիններ ՀՈԱԿ-ներ | Գ. Եղիազարյան<br>Հ. Բաղդասարյան<br>Գ. Դատումյան | |
| 8 | «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքին համապատասխան հաշվետվությունների ներկայացում և ամփոփում | ընթացքում, 6 ամիսը մեկ անգամ, հունիսի 30-ին, դեկտեմբերի 30-ին | բաժինների պետեր, համայնքային ծառայողներ | Գ. Դատումյան<br>Շ. Հովհաննիսյան | |
| 9 | Նախապատրաստել և անցկացնել թափուր տեղերի մրցույթ և հերթական ատեստացիա | ըստ անհրաժեշտության | աշխատակազմ | Գ. Դատումյան<br>Շ. Հովհաննիսյան | |
| 10 | ՏԿՏ-ների պետերի սեմինար-խորհրդակցություններ -ընթացիկ գործունեության քննարկումներ | ամիսը մեկ անգամ կամ ըստ անհրաժեշտության | քարտուղար, խորհրդական | Գ. Դատումյան<br>Ա. Տոնյան<br>Հ. Խաչատրյան | |
| 11 | Բյուջեի եկամուտների հավաքագրման հետ կապված թռուցկաժողովներ | պարբերաբար կամ ըստ անհրաժեշտության | քաղաքապետի տեղակալներ, բաժինների պետեր | Գ. Եղիազարյան<br>Ա. Խաչատրյան | |
| 12 | Զինապարտների զինվորական հաշվառման աշխատանքների իրականացում | գործող օրենսդրությամբ և կարգով սահմանված ժամկետներում՝ հունվար-նոյեմբեր | աշխատակազմ, ՔԿԱԳ | Գ. Դատումյան<br>Վ. Գինովյան<br>Շ. Հովհաննիսյան<br>Ա. Գրիգորյան<br>Կ. Ղոնաղչյան<br>Ա. Տոնյան | |
| 13 | Աջակցություն քաղաքապետի և ավագանու ընտրությունների նախապատրաստմանն ու անցկացմանը | Ըստ ժամանակացույցի | աշխատակազմ, տարածքային ընտրական հանձնաժողովի հետ համատեղ | Գ. Դատումյան | |
| 14 | Ներքին ցանցի սպասարկում և տեղեկատվությունների թարմացում | 2016թ. ընթացքում | աշխատակազմ | Գ. Եղիազարյան<br>Ա. Համբարձումյան | |
| 15 | Վարչական վարույթներ և վարչական գործերի վարում | ընթացքում | Իրավաբան | Ս. Սահակյան | |

# ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

| N | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԲԱԺԻՆ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ | ՆՇՈՒՄՆԵՐ |
|---|---|---|---|---|---|
| 1. | 2016թ. ընթացքում ֆինանսատնտեսագիտական բաժնի կողմից օրենքով սահմանված կարգով«Տեղական ինքնակառավարման մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Գնումների մասին», «Տեղական տուրքի և վճարների մասին» ՀՀ օրենքների և քաղաքապետարանի կանոնադրությամբ բաժնին ամրագրված պահանջներին համապատասխան իրականացնել ներքոհիշյալ գործառույթները.<br>1.2015թ. բյուջետային տարվա ամփոփում:<br>2. 2016թ. Աշտարակ համայնքի բյուջեի կազմման աշխատանքների կազմակերպում և ներկայացում ավագանու հաստատմանը:<br>3. 2012-2016թթ. քառամյա ծրագրում ֆին. և կանխ. բաժնի կողմից ֆինանսական ամփոփ կանխատեսում և վերլուծություն:<br>4. Քաղաքապետարանի աշխատակազմի և բաժինների կողմից իրականացվող գործառույթների ֆինանսավորում:<br>5. Քաղաքապետարանին ենթակա կրթամշակութային-բյուջետային հիմնարկների ֆինանսական գործունեության ապահովում և վերահսկողություն:<br>6. Քաղաքապետարանի աշխատակազմի կողմից ներկայացվող ծրագրերի ֆինանսական վերլուծություն և ֆինանսավորում: | դեկտեմբեր<br>Հունվար<br><br>2016թ. հունվար<br>2016թ. դեկտեմբեր<br><br>ընթացքում<br><br>մշտական<br><br>ընթացքում | Ֆինանսատնտեսագիտական բաժին<br><br>Ֆին. բաժին<br>Այլ բաժիններ<br><br>Ֆին. բաժին<br><br>Ֆին. բաժին | Ա. Խաչ ատր յ ան<br>Ա. Ար ամ յ ան<br>Տ. Չալաբյան<br><br>Ա. Խաչատրյան<br>Տ. Չալաբյան<br>Ա.Արամյան<br><br>Բաժինների պետեր<br><br>Ա. Խաչատրյան<br><br>Ա. Խաչատրյան | |
| 2. | Բյուջեի կատարման ուղղությամբ միջոցառումների իրականացում:<br>- Եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվությունների նախապատրաստում:<br>- Ֆինանսական գործառույթներ<br>- առաջարկությունների նախապատրաստում՝ ներկայացնելով ավագանու քննարկմանը: | 2016թ. ընթացքում | Ֆին. բաժին | Գ. Դատունյան<br>Ա. Խաչատրյան<br>Ա. Արամյան | |

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

| Հ/Հ | ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԲԱԺԻՆ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ |
|---|---|---|---|---|
| 1 | Քաղաքի բարեկեցության, պատմական տեսքի պահպանման ինչպես նաև զարգացման համար ծրագրերի մշակում: | Մշտական | քաղաքաշինության և հողօգտագործման բաժին | Կ. Հովեյան<br>Ա. Մնացականյան<br>Վ. Վարդանյան<br>Ա. Գրիգորյան |
| 2 | Իրականացնել հսկողություն գյուղատնտեսական նշանակության հողատարածքները նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: | Մշտական | քաղաքաշինության և հողօգտագործման բաժին | |
| 3 | Ինքնակամ շինությունների օրինականացման համար համապատասխան աշխատանքների կատարում: | Մշտական | քաղաքաշինության և հողօգտագործման բաժին | |
| 4 | Նախկինում տրամադրված և փաստացի օգտագործվող հողատարածքների սահմանների անճշտության հետ կապված թերությունների վերացում: | Մշտական | քաղաքաշինության և հողօգտագործման բաժին | |
| 5 | Ուսումնասիրել քաղաքացիների դիմումները բաժնի մասնագետների միջոցով:Վիճահարույց խնդիրներին լուծում տալ մշտական գործող հանձնաժողովի միջոցով: | Մշտական | քաղաքաշինության և հողօգտագործման բաժին | |
| 6 | Ձեռնարկել միջոցառումներ վարձակալների /կառուցապատողների/ կողմից վարձավճարների գանձման ուղղությամբ: | Մշտական | քաղաքաշինության և հողօգտագործման բաժին | |
| 7 | Ամենօրյա հսկողություն քաղաքում կատարվելիք շինարարական աշխատանքների նկատմամբ: | Մշտական | քաղաքաշինության և հողօգտագործման բաժին | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8 | Համայնքի վարչական սահմաններում գտնվող ինքնակամ շինությունների հաշվառում: | Մշտական | քաղաքաշինության և հողօգտագործման բաժին | Ա. Մնացականյան<br>Վ. Վարդանյան |
| 9 | Կատարել գոյություն ունեցող վարձակալությամբ տրված գյուղատնտեսական նշանակության հողամասերի գույքագրում, համադրում, ճշգրտում և տեղադրում կադաստրային քարտեզներում: Անհրաժեշտության դեպքում կատարել սահմանների և սահմանանիշերի ճշգրտում լիցենզավորված մասնագետի միջոցով /վարձակալի միջոցների հաշվին/: Պայմանագրային պարտավորությունները չկատարած վարձակալների պայմանագրերը լուծել օրենքով սահմանված կարգով: | հունվար-հունիս | քաղաքաշինության և հողօգտագործման բաժին | Կ. Հովեյան<br>Գ. Ուռուտյան<br>Ա. Գրիգորյան |
| 10 | Լիցենզավորված մասնագետի կողմից չափագրված հողամասերի /գյուղ. նշանակության և տնամերձ/ հատակագծերը տեղում ուսումնասիրել, տեղադրել կադաստրային քարտեզում և տրամադրել անհրաժեշտ փաստաթղթերը գույքի պետական գրանցում կատարելու համար: | Մշտական | քաղաքաշինության և հողօգտագործման բաժին | Ա. Գրիգորյան |
| 11 | Քաղաքացիների դիմումների համաձայն տրամադրել տեղեկատվություն և հողհատկացման քաղվածքներ ըստ անհրաժեշտության: | Մշտական | քաղաքաշինության և հողօգտագործման բաժին | Կ. Հովեյան<br>Գ. Ուռուտյան |
| 12 | Աջակցել հողօգտագործողներին սերմացուի, հանքային պարարտանյութերի և դիզ. վառելիքի ձեռք բերման հարցում և մշտապես իրազեկել ազգաբնակչությանը: | հունվար-ապրիլ | քաղաքաշինության և հողօգտագործման բաժին | Ա. Գրիգորյան |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 13 | Իրազեկել և տրամադրել հողօգտագործողներին պետական ծրագրերի շրջանակներում հատկացված թունաքիմիկատները կամ պայքարի միջոցները հողամասերի չափաբաժիններին համապատասխան: | նոյեմբեր-դեկտեմբեր | քաղաքաշինության և հողօգտագործման բաժին | Ա. Գրիգորյան |
| 14 | Հսկողություն իրականացնել ոռոգման ցանցի շահագործման ինչպես նաև ոռոգման գծի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու վրա: Ուշադրության կենտրոնում պահել և համայնքի ղեկավարի աջակցությամբ հասնել ոռոգման ցանցի ընդլայնմանը և արդյունավետ օգտագործմանը: | Մշտական | քաղաքաշինության և հողօգտագործման բաժին | Կ. Հովեյան<br>Ա. Գրիգորյան<br>Մ. Հովհաննիսյան |
| 15 | Իրականացնել հսկողություն գյուղատնտեսության և անասնապահության ոլորտում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ իրենց գործունեության արդյունքում առաջացած թափոններց շրջակա միջավայրը զերծ պահելու և չաղտոտելու համար: | Մշտական | քաղաքաշինության և հողօգտագործման բաժին | Կ. Հովեյան<br>Ա. Գրիգորյան |
| 16 | Ա. Մանուկյան, Տ. Մեծի, Ն. Սաֆարյան և Գեղազնիկի փողոցների խաչմերուկի լուծման իրականացում | ապրիլ-սեպտեմբեր | քաղաքաշինության և հողօգտագործման բաժին | Կ. Հովեյան<br>Ա. Մնացականյան<br>Վ. Վարդանյան |
| 17 | Պռոշյան փողոցում գտնվող առվի եզրագծերի ցանկապատում մետաղական ցանցով և նոր ճարտարապետական լուծումների իրականացում | մարտ-մայիս | քաղաքաշինության և հողօգտագործման բաժին | Կ. Հովեյան<br>Ա. Մնացականյան<br>Վ. Վարդանյան |

Հաստատված գլխավոր հատակագծի իրականացման միջոցառումներ՝ ըստ առաջնահերթությունների.

| | |
|---|---|
| • կենտրոնական հրապարակի կազմակերպման, արդիականացման իրականացում.<br>_ կառուցապատման նախագծի մշակում,<br>_ աշխատանքների իրականացում,<br>_ գեղարվեստական լուսավորության իրականացում:<br>• ներքին փողոցային ցանցի բարելավման աշխատանքներ (պակասող օղակների լրացմամբ),<br>• Ղափանցյան փողոցի ճարտարապետական- քաղաքաշինական պատմական գոտու ձևավորում.<br>_ ապօրինի կառույցների ապամոնտաժում,<br>_ մուտքային հանգույցի ձևավորում (մուտքային կամարի իրականացում, հետիոտն կամրջակի, ճեմուղու իրականացում),<br>_ կառույցների աստիճանական վերակազմավորում՝ գլխավոր հատակագծով մշակված գործառույթների վերագրմամբ,<br>_ կանաչ ճեմուղու կազմակերպում,<br>_ գեղագիտական անարժեք մակերեսների գեղարվեստական նկարազարդումների իրականացում՝ միջնադարյան քաղաքաշինական միջավայրի թեմատիկ պատկերազարդմամբ, քաղաքաշինական արգելոցում միասնական պատմական միջավայրի ապահովման համար:<br>• Քաղաքի պատմաճարտարապետական հուշարձանները ներառող զբոսաշրջային երթուղիների մշակում, դրանց վերաբերյալ գովազդային բուկլետի մշակում, տպագրություն:<br>• Քաղաքային զբոսայգու հատակագծային կազմակերպման իրականացում<br>_ լանդշաֆտ-դիզայն նախագծի մշակում,<br>_ իրականացում (արահետա-ճեմուղային ցանցի կառուցում, ծառատնկումներ, տաղավարների, զրուցարանների տեղադրում, գեղարվեստական լուսավորության իրականացում):<br>• Տպագրատան կիսախարխուլ շենքի վերակազմավորում՝ միասնական համալիրում ներառելով.<br>_ կառույցի երկրորդ հարկը՝ որպես հանդիսությունների, գիտաժողովների անցկացման սրահներ,<br>_ առաջին հարկը վերագործարկելով որպես տպագրման առաջին փորձերից մինչ օրս տպագրության զարգացման պատմության թանգարան (սարքավորումների, առաջին տպագրական մեքենաների, գրքերի, թղթի և այլնի ցուցադրությամբ), մասնակիորեն պահպանելով հիմնական՝ տպագրման ֆունկցիան, որում սակայն կիրառվում են նշված մեթոդները, հնարավորություն ընձեռելով այցելուներին պատվիրել մեթոդի կիրառմամբ որևէ պատմական նյութի տպագրություն և վերջինիս ձեռք բերում: | Մշտական<br><br>Կ. Հովեյան<br><br>Ա. Մնացականյան<br><br>Վ. Վարդանյան |

| | |
|---|---|
| • Հյուսիս-հարավ արագընթաց ճանապարհային միջանցքի կից այս ուղղությամբ իրականացվող երկկողմ բեռնափոխարդումների համար մեծածախ առևտրի, ապրանքների գովազդման, ցուցահանդես վաճառքների կազմակերպման համալիրի ձևավորման (logistics)՝ (համապատասխան ենթակառուցվածքներով՝բեռնատարների կայանման, բեռնման-բեռնաթափման հարթակներ, բեռնափոխադրումների կազմակերպում, պահեստավորման տարածքներ, առևտրային հարթակներ, ապրանքափոխանակման, տեղաբաշխման հարթակներ, ցուցադրական-գործարքային-խորհրդատվական տարածքներ, նորոգման, սպասարկման, հյուրանոցային-սննդի-ժամանցային հաստատությունների ձևավորում) հնարավորությունների հետազոտում, իրականացման առաջնահերթությունների նախանշում, տնտեսավետության հաշվարկ, դրական արդյունքների պարագայում կազմակերպման փուլային իրականացում:<br>• ազգային ավանդական տոնակատարությունների, տոնավաճառների կազմակերպման համար առանձնացված և ազգագրական պահանջներով սարքավորված տեղամասի ձևավորում.<br>_ բուն տոնավաճառային գոտի՝ Երևան-Էջմիածին խճուղու հարևանությամբ խճուղու և Նարեկ թաղամասի միջև տեղակայված հատվածում գյուղատնտեսական մթերքների մեծածախ վաճառքի կազմակերպման համար,<br>_ զվարճանքի-տոնավաճառային գոտի, Աշտարակ-Ապարան ճանապարհային հանգույցի հարակից ծախսակողմյան հատվածի շահագործված խարամի հանքավայրի տեղում՝ ռեկուլտիվացնելով հանքավայրի շահագործումից գոյացած փոսը- նման տարածքների համար համաշխարհային պարկտիկայում լայն տարածում գտած ջրային մակերեսների ձևավորմամբ, կանաչապատ գոտիների ձևավորմամբ, այս հատվածը սակայն առավել ձևավորելով որպես հասարակական միջոցառումների կազմակերպման, ավանդական տոնակատարությունների անցկացման (գինու, բերքի, ծաղկազարդի, վարդավառի և այլ), ավանդական ուտեսների համտեսման, պատրաստման և վաճառքի կազմակերպման տարածք՝ հանդիսատեսների համար ամֆիթատրոնի նախատեսմամբ, բեմահարթակի կազմակերպմամբ:<br>• Քասախի կիրճում սարքավորված հանգստի հարթակների ձևավորում (ծկնորսական հատված, խաղահրապարակներ, խարույկի հարթակներ և այլն):<br>• Պռոշյան փողոցի վրա գտնվող՝ նախկին շուկայի տարածքում հանգստի գոտու ձևավորում /պուրակ/ | Մշտական<br><br>Կ. Հովեյան<br><br>Ա. Մնացականյան<br><br>Վ. Վարդանյան<br><br>Հ. Բաղդասարյան |

# ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԱՌԵՎՏՈՒՐ, ԱՆՎՏԱՆԳ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

| *ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ* | *ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ* | *ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ* |
|---|---|---|
| Համատիրությունների ընդհանուր ժողովների կազմակերպում | Ընթացքում | Մ. Հովհաննիսյան<br>Ս. Ալմազյան<br>Պ. Զոհրաբյան |
| Աջակցել համատիրություններին բազմաբնակարան շենքերի կառավարումն իրականացնելու գործընթացին | Մշտապես | Մ. Հովհաննիսյան<br>Ա. Տոնյան |
| Աշխատանք ՏԿՏ-ների հետ, անհրաժեշտության դեպքում իրականացնել շրջայցեր | Մշտապես | Հ. Խաչատրյան<br>Մ. Հովհաննիսյան |
| Իրականացնել ամենօրյա հսկողություն հասարակական տրանսպորտի աշխատանքի նկատմամբ: Սպասարկող տրանսպորտային ընկերությունների հետ քննարկել ազգաբնակչության բողոքներն ու առաջարկները | Յուրաքանչյուր ամիս | Մ. Հովհաննիսյան |
| Համագործակցել ճանապարհային ոստիկանության, կապի և տրանսպորտի նախարարության հետ հասարակական աշխատանքներին խոչընդոտող արգելքները հաղթահարելու համար | Մշտապես | Մ. Հովհաննիսյան |
| Ուսումնասիրել և առաջարկություն ներկայացնել ավտոբուսային կանգառները համապատասխան ճան. երթևեկության նշաններով աստիճանաբար կահավորելու համար | Տարվա ընթացքում | Հ. Խաչատրյան<br>Մ. Հովհաննիսյան |
| Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հասարակական տրանսպորտի աշխատանքը վերահսկելու նպատակով միկրոավտոբուսների վրա տեղադրված են նավիգացիոն համակարգեր, աշխատանքներ տանել շահագրգիռ կազմակերպությունների հետ ազգաբնակչությանն այն նույնպես տեսանելի դարձնելու համար | 1 եռամսյակ | Գ. Եղիազարյան<br>Հ. Խաչատրյան<br>Մ. Հովհաննիսյան |
| Ապահովել դպրոցական ավտոբուսի անխափան և կանոնավոր աշխատանքը | Մշտապես | Մ. Հովհաննիսյան |
| Աշխատանքներ տանել քաղաքի գլխավոր փողոցները ճանապարհային երթևեկության նշաններով կահավորելու սխեման սահմանված կարգով հաստատելու և աստիճանաբար այն իրականացնելու համար | Տարվա ընթացքում | Հ. Բաղդասարյան<br>Մ. Հովհաննիսյան |
| Ոգելից խմիչքի, ծխախոտի, տեխնիկական հեղուկների վառելիքաքսայուղային նյութերի, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառքի թույլտվությունների տրամադրում | ընթացքում | Ա. Խաչատրյան<br>Ա. Եսայան |
| Տաքսի ծառայությունների, գազալցակայանների, հանրային սննդի իրացման, ֆիրմային անունների տրամադրման առաջարկությունների նախապատրաստում | ընթացքում<br>ըստ անհրաժեշտության | Ա. Եսայան |
| Չթույլատրված վայրերում առևտուրը բացառելու նկատմամբ հսկողության իրականացում | մշտապես | Ա. Եսայան |
| Հասցեների ճշտման աշխատանքներ զինկոմիսարիատի, անձնագրային բաժնի, ՏԿՏ-ների և սպասարկող կազմակերպությունների հետ | մշտապես | Վ. Գինովյան<br>Ա. Տոնյան<br>Կ. Ղոնաղչյան |
| Փոխհամաձայնեցված աշխատանք ՔԿԱԳ-ի և ՄՇՏԳ-ի հետ | ըստ անհրաժեշտության | Ա. Տոնյան |
| Փոփոխություններ և լրացումներ քաղաքի բնակչության ռեգիստրում | մշտապես | Ա. Տոնյան<br>Կ. Ղոնաղչյան |

# ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

| Հ/Հ | ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ |
|---|---|---|---|
| 1. | Ստուգայցեր, պարապմունքների լսումներ-քննարկումներ | Տարվա ընթացքում | Մ. Յաչչյան |
| 2. | «Ապարանյան ձմեռ» | Հունվարի 13 | Մ. Յաչչյան<br>այլ մասնագետ |
| 3 | Կանանց միջազգային օրվան նվիրված շնորհավորանք՝ գարնանային ծաղիկների և նվերների տեսքով | Մարտի 8 | Մ. Յաչչյան<br>Ա. Աղաբաբյան |
| 4 | Ցերեկույթ նվիրված Մայրության և գեղեցկության օրվան /Երաժշտական դպրոց/ | Ապրիլի 7 | Մ. Յաչչյան<br>այլ մասնագետ<br>Կրթամշակութային ՀՈԱԿ-ներ |
| 5 | Մոմավառություն՝ Եղեռնի զոհերի հիշատակին | Ապրիլի 24 | Մ. Յաչչյան<br>Վ. Խաչատրյան<br>Հ. Աղամալյան<br>Ե. Չալաբյան |
| 6 | Երթ դեպի Կոմիտասի անվան զբոսայգի և Արցախում զոհված ազատամարտիկների հուշահամալիր | Մայիսի 9 | Մ. Յաչչյան<br>Կրթամշակութային ՀՈԱԿ-ներ Գ.Սմբատյան |
| 7 | Ուսուցում՝ նախադպրոցական հաստատությունների տնօրենների և աշխատակիցների համար | Մայիս | Գ.Եղիազարյան<br>Մ. Յաչչյան |
| 8 | Համագործակցելով Սբ.Մարիանէ եկեղեցու հոգևոր հովվի հետ կազմակերպել հուշ-երեկո՝ նվիրված Ն.Աշտարակեցուն | Հունիս | Մ. Յաչչյան<br>Կրթամշակութային ՀՈԱԿ-ներ |
| 9 | Համայնքի նախադպրոցական հաստատությունների սաների ձեռքի աշխատանքի ցուցահանդես, միջոցառում /քաղաքային մշակույթի տանը/ | Հունիսի 1 | Մ. Յաչչյան<br>Նախակրթարաններ |
| 10 | <Լավագույն մարզական ընտանիք> մրցույթ | Հունիս | Մ. Յաչչյան<br>այլ մասնագետ |
| 11 | Մասնագիտացված դպրոցների հաշվետու համերգներ, ցուցահանդեսներ | Հուլիսի 1-10 | Մ. Յաչչյան<br>Կրթամշակութային ՀՈԱԿ-ներ |

| | | | |
|---|---|---|---|
| 12 | 1716-րդ խաչի օծման և տեղադրման արարողությունը տառերի քար-<br>պուրակում | Օգոստոս | Մ. Յաշչյան<br>Կրթամշակութային<br>ՀՈԱԿ-ներ |
| 13 | Սփյուռքի երիտասարդների <Արի տուն> հայրենաճանաչության ծրագրի | Օգոստոս | Մ. Յաշչյան<br>այլ մասնագետ |
| 14 | Գիտելիքի օրվան նվիրված միջոցառումների շարք | Սեպտեմբեր 01 | Հանրակրթական<br>դպրոցներ |
| 15 | Մարզական փառատոն | Սեպտեմբեր | Մ. Յաշչյան<br>Գ. Գյոզալյան |
| 16 | Արտէքսպո Գյումրիում<br>Ցուցահանդես, հյուրասիրություն | Սեպտեմբեր | Մ. Յաշչյան<br>Վ. Մանոյան |
| 17 | Համայնքի նախադպրոցական հաստատություններում,<br>մասնագիտացված դպրոցներում առաջատար փորձի փոխադարձ<br>դասալսումներ | Տարվա ընթացքում | Մ. Յաշչյան |
| 18 | Համերգ, հյուրասիրություն, հրավառություն, | Սեպտեմբեր 21 | Մ. Հովհաննիսյան<br>Մ. Յաշչյան<br>Կրթամշակութային<br>ՀՈԱԿ-ներ |
| 19 | «Աշտարակի օր», «Հին ու Նոր Աշտարակ» խորագրով միջոցառում<br>մշակույթի տանը | Հոկտեմբերի<br>առաջին շաբաթ<br>օրը | Մ. Յաշչյան<br>Կրթամշակութային<br>ՀՈԱԿ-ներ |
| 20 | Ամանորին նվիրված /Բոլոր հեքիաթների հերոսները Աշտարակում/<br>միջոցառում , գլխավոր տոնածառի լույսերի վառման<br>տոնակատարություն և հրավառություն | Դեկտ. 25-31 | Մ. Յաշչյան<br>Վ. Խաչատրյան<br>Վ. Մանոյան |

## ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺԻՆ

| *Հ/Հ* | *Միավոր* | *Պատասխանատու անձ* | *Աուդիտի տեսակ* | *Սկզբի ամսաթիվ* |
|---|---|---|---|---|
| 1 | Ֆինանսատնտեսագիտական բաժին | Ս. Ղազարյան<br>Ա. Եղիազարյան | Համակարգի գնահատման աուդիտ | 26/01/2016 |
| 2 | «Արաքս Մուրադյան» մսուր մանկապարտեզ | | Համակարգի գնահատման աուդիտ | |
| 3 | «Արևիկ» մսուր մանկապարտեզ | | Համակարգի գնահատման աուդիտ | |
| 4 | Ա. Այվազյանի անվան երաժշտական դպրոց | | Համակարգի գնահատման աուդիտ | |
| 5 | Քաղաքային մշակույթի տուն | | Համապատասխանության աուդիտ | |
| 6 | «Աշտարակի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ | | Համակարգի գնահատման աուդիտ | |
| 7 | «Բարեկարգում» ՀՈԱԿ | | Համակարգի գնահատման աուդիտ | |

*Այն բաժինների ու աշխատակազմի մասնագետները, որոնց գործառույթները ընդգրկված չեն սույն աշխատանքային պլանում, իրականացնելու են կանոնադրությամբ իրենց վերապահված աշխատանքներն ամբողջությամբ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության աջակցելու են միջոցառումներ անցկացնող բաժիններին:*

*Աշխատակազմն ապահովում և ներգրավում է ավագանու անդամների ակտիվ մասնակցությունը նախանշված աշխատանքներին:*

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն